



# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## 11 (01)

ԵՐԵՎԱՆ  
2020

ՀՏԴ 001  
ԳՄԴ 72  
Ե 744

Հաստատված է ԵՀ Գիտական խորհրդի  
2020թ. հունիսի 12-ի թիվ 17 նիստում

**Գլխավոր խմբագիր՝**

**Բիշարյան Հեղինե**, մանկավարժական գիտ. թեկնածու

**Խմբագրական խորհուրդ**

**Մարտիրոսյան Տ.**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Վահանյան Գ.**, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Կիրակոսյան Ն.**, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Հայրապետյան Վ.**, տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
**Մելիքյան Վ.**, տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
**Խաչատրյան Ա.**, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Տոնոյան Ն.**, իրավագիտության թեկնածու, դոցենտ  
**Մուրադյան Մ.**, իրավագիտության թեկնածու, դոցենտ  
**Շահգեղյան Մ.**, քաղաքագիտության թեկնածու  
**Աբրահամյան Հ.**, պատմական գիտ.դոկտոր, պրոֆեսոր  
**Եսոյան Մ.**, պատմական գիտ. թեկնածու, դոցենտ  
**Մանուկյան Ե.**, փիլիսոփայական գիտ.թեկնածու  
**Նալչաջյան Կ.**, հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ  
**Մանասյան Գ.**, աշխարհագրական գիտ. թեկնածու, դոցենտ  
**Առաքելյան Ս.**, բանասիրական գիտ. թեկնածու  
**Հարությունյան Ս.**, ֆիզ.-մաթ. գիտ.թեկնածու, դոցենտ

Ե 744 **Եվրոպական համալսարան:** Գիտ. հոդվածների ժող./ ԵՀ.

Գլխ. խմբ.՝ Հ. Բիշարյան,– Եր.: «ԵՀ» հրատ., 2020: Գիրք 11(01) – 640 էջ:

*Ժողովածուն ընդգրկում է իրավագիտության, կառավարման, տնտեսագիտության, լեզվաբանության, հոգեբանության, մանկավարժության, փիլիսոփայության, քաղաքագիտության, պատմության, ինֆորմատիկայի, զբոսաշրջության տարբեր ուղղությունների հրատարակած հոդվածների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:*

ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ  
EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001  
ԳՄԴ 72

ISBN 978-99941-2-609-5

© Եվրոպական համալսարանի հրատարակչություն, 2020  
© Publishing of European University, 2020

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### «ԴԱՏԱՐԱՆԻ ՍԿԱՆԴԱԼԻԶԱՑԻԱ» ԵՐԵՎՈՒՅԹԻ ԴԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

**Ալինա Փիրիկյան**

Ե Հ, Իրավագիտության ամբիոն, ի.գ.թ., դրոցենյա  
pkhrikyan@yahoo.com, +374 91 479069

Սույն հոդվածի շրջանակներում պատմահամեմատական քննության առարկա է դարձել դատարանի և դատական իշխանության նկատմամբ հասարակության լայն շերտերի ունեցած վստահությունը խաթարող գործոններից մեկը, որն անգլիական քրեական իրավունքի պատմությանը հայտնի էր «դատարանի սկանդալիզացիա» եզրույթով: Ներկայացվում են նաև ժամանակակից աշխարհում այդ երևույթի դրսևորման ձևերը և մասնագիտական շրջանակներում դրա նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

**Հիմնաբառեր.** դատարանի սկանդալիզացիա, դատական իշխանություն, խոսքի ազատություն, հանրային վստահություն

«Ինձ, որպես մարդու հարգելը պարտադիր չէ, բայց դատարանը հարգել՝ պարտադիր է: Ինձ համար միևնույնն է, թե դուք ինչ կարծիք ունեք իմ մասին, բայց դատական համակարգը և օրենքը հարգել պարտավոր եք», այս խոսքերը պատկանում են մեր օրերում ԱՄՆ ամենահայտնի և հասարակության կողմից ամենասիրված դատավոր Ֆրանկ Կապրիոյին:

Դատարանի նկատմամբ ցուցաբերած հարգանքն էական ազդեցություն է ունենում արդարադատության արդյունավետության և դատարանի անկախության վրա: Անշուշտ, նշված երևույթների վրա ազդող գործոնները բազմաթիվ և բազմաշերտ են, որոնցից յուրաքանչյուրն էլ ուշադրության արժանի է: Հասարակությունը կամ առանձին վերցրած անձը, որը հարգում է դատարանը, երբևէ չի փորձի ճնշում գործադրել դրա վրա:

Հարկ է նկատել, որ երբ խոսում ենք դատարանի նկատմամբ հարգանքի բացակայության հիմնախնդրի մասին, առավելապես նկատի ունենք ոչ թե դատարան և դատավարության կողմեր, այլ՝ դատարան և հասարակություն փոխհարաբերությունները, քանի որ առաջինի դեպքում դատավարության կողմերն առավելապես կաշկանդված են

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թե՛ հոգեբանորեն, և թե՛ հստակ ձևակերպված իրավական նորմերով, որոնք նվազեցնում են դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման ռիսկերը: Ավելին, գրեթե բոլոր երկրների բոլոր ժամանակներում գործող քրեական օրենսդրությունները համապատասխան պատիժներ են սահմանում դատավարության կողմերի՝ դատարանի նկատմամբ ցուցաբերած անհարգալից վերաբերմունքի համար:

Ժամանակակից ինֆորմացիոն դարաշրջանում, երբ ՁԼՄ-ներից բացի ցանկացած անձ ըստ էության տեղեկատվության աղբյուր է, իսկ սոցիալական ցանցերը՝ դրա տարածման հիմնական գործիքը, տեղեկատվության անկառավարելի տեղատարափի ներքո դատարանների և դատավորների բարի համբավն ու պատիվը գործնականում դառնում են խիստ խոցելի և անպաշտպան: Ավելին շատ հաճախ ժամանակակից տեղեկատվական հարթակները հնարավորություն են տալիս քողարկված ճշումներ գործադրել դատավորի նկատմամբ կամ դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո էլ վարկաբեկել ոչ միայն կոնկրետ դատավորին այլև ամբողջ դատական իշխանությունը:

Վերոհիշյալ երևույթն իրավունքի պատմությանը հայտնի է «դատարանի սկանդալիզացիա»[1] («*scandalizing the court*») հասկացությամբ: Ինչո՞ւ պատմությանը, քանի որ այն ըստ էության իր արդիականությունը կորցրել է և դուրս է եկել գործածությունից իր ծագման երկրում՝ Անգլիայում: Սակայն վերջին շրջանում, որոշ, հիմնականում՝ զարգացող երկրների մասնագիտական շրջանակներում նորից աշխուժանում են քննարկումներն այս եզրույթի շուրջ և դրան տրվում է նոր երանգավորում ու իրավական ձևակերպում:

Անգլիական քրեական իրավունքում «դատարանի սկանդալիզացիան» համարվում էր դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման ձև, որն արտահայտվում էր դատարանի հեղինակությանը վնասող, դատարանի նկատմամբ անվստահություն սերմանող կամ դատավորի անկողմնակալության վրա ստվեր նետող տեղեկատվության տարածմամբ:

***Ըստ էության «դատարանի սկանդալիզացիա» տերմինն օգտագործվում է բնորոշելու, որպես կանոն ավարտված գործերի կապակցությամբ կամ ընդհանրապես դատարանի նկատմամբ ցուցաբերած այնպիսի կոպիտ վերաբերմունքը (հիմնականում հրապարակման միջոցով), որը նպատակ ունի խաթարել դատական իշխանու-***

### **թյան հեղինակությունը և հանրային վստահությունը վերջինիս նկատմամբ[2]:**

Եզրույթն առաջացել է 18-րդ դարում[3]և շրջանառության մեջ է դրվել ու լայն տարածում ստացել, երբ դատավոր լորդ Մանսֆիլդը փոփոխեց Ջոն Ուիլքեսի վերաբերյալ կայացված դատական ակտը և ոմն պարոն Ալմոնդ հրապարակեց և սկսեց վաճառել «Նամակ զրպարտության, օրդերների(որոշումների), փաստաթղթերի առգրավման և... մասին» վերտառությամբ մի անանուն գրքույկ, որում նշվում էր, որ դատարանը Ջ.Ուիլքեսի վերաբերյալ դատական ակտը փոփոխել է «*առանց ընթացակարգերի պահպանման, անհիմն և ապօրինի*»[4], դրանով իսկ կասկածի տակ դնելով դատավորի ազնվությունը, անկողմնակալությունը, նախադեպային իրավունքի նկատմամբ հարգանքը և ենթադրելով, որ նա քաղաքական կողմնապահություն է ցուցաբերել: Պատմությունը վկայում է, որ գրքույկն այնքան պահանջարկված էր, որ վերահրատարակվեց երեք անգամ: Երբ դատախազությունը գործ հարուցեց հրատարակչի նկատմամբ, գործը քննող դատավոր Ուիլմոտը նախապատրաստեց դատական ակտի նախագիծ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալմոնդն ընդունել էր իր մեղքը և ներողություն էր խնդրել դատավորից, դատախազը հրաժարվեց մեղադրանքից: Միայն 37 տարի անց այս որոշումը (ըստ էության՝ նախագիծը) հրապարակվեց դատավոր Ուիլմոտի դատական նախադեպերի ժողովածուի մեջ՝ դառնալով նախադեպ նմանատիպ գործերի համար և լայն քննարկման առարկա դոկտորինալ շրջանակներում: Դրանում մասնավորապես նշվում էր, որ չի կարող տեղի ունենալ ավելի մեծ սկանդալ, քան երբ պամֆլետիստների և լրագրողների կողմից մարդկանց ներկայացվում է, որ դատական իշխանությունը, որը կոչված է նրանց պաշտպանել, անդառնալիորեն այլասերված է: Այդ պարագայում դատարանը կարող է պահել իր իշխանությունը, բայց անմիջապես կկորցնի իր հեղինակությունը, իսկ դատական իշխանությունն առանց հեղինակության երկար գոյատևել չի կարող:

Ի հաշիվ խոսքի ազատության սահմանափակման՝ դատական իշխանության քննադատության բացարձակ անթույլատրելիության դրսևորումն անգլիական իրավունքում տևեց մինչև 20-րդ դարի սկիզբ, երբ R v. Gray (1900) և հետագա գործերով սահմանվեց, որ «դատարանի սկանդալիզացիա» է որակվում ցանկացած գործողություն կամ հրա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պարակում, որի նպատակն է արհամարհանք սերմանել դատարանի նկատմամբ և նսեմացնել դրա հեղինակությունը, պայմանով որ դատարանները և դատավորները պետք է բաց լինեն քննադատության համար: Հետևաբար, եթե քննադատությունը հիմնված է ողջամիտ դատողությունների վրա, որոնցից կարելի է եզրակացնել, որ դատական ակտը չի համապատասխանում օրենքին կամ չի բխում հանրային շահերից, ապա այն չի կարող որակվել որպես «դատարանի սկանդալիզացիա»:

20-րդ դարում հրապարակած «դատարանի սկանդալիզացիայի» առնչությամբ տարբեր դատական նախադեպերում հանդիպում ենք դատարանների կողմից ձևակերպված այնպիսի դիրքորոշումներ, որոնցով մի կողմից դատավորներին այսպես ասած՝ «տողատակերով» հորդորվում է «երբեմն լռել/անտեսել», և առավել ևս չօգտագործել այս լծակը քննադատողներին լռեցնելու համար, քանի որ խաղաղույթին առավել բարձր արժեք է՝ խոսքի ազատությունը: Նոր ժամանակաշրջանի անգլիական նախադեպային իրավունքն ընդունելի համարեց այն, որ անձն իրավունք ունի դատարանի ակտն անվանել անարդար կամ ապօրինի: Մյուս կողմից՝ իրենց ընդդիմախոսներին (խորհրդարանում և դրանից դուրս) դատարանները խնդրում են հիշել այն մասին, որ ի պաշտոնե դատավորները զրկված են համարժեք պատասխան տալու և առավել ևս՝ քաղաքական երկխոսության մեջ մտնելու հնարավորությունից[5]:

Նորագույն ժամանակաշրջանում, ինչպես վերը նշեցինք, անգլիական իրավունքում գրեթե մոռացության է տրվում, իսկ 2012 թվականին Մեծ Բրիտանիայի Իրավական հանձնաժողովի կողմից հրապարակված խորհրդատվական զեկույցում խորհրդարանին առաջարկվում է գործնականորեն վերացնել «դատարանի սկանդալիզացիայի» ինստիտուտը[6], ինչը չենք ասի Բրիտանական համագործակցության անդամ այլ երկրների մասին, ուր դեռևս արդիական է այս ինստիտուտը և դատական պրակտիկայում և դոկտրինալ շրջանակներում դեռևս հանդիպում ենք հարցի վերաբերյալ քննարկումներ:

Նշվում է, որ եթե Միացյալ թագավորությունում վաղուց նման դատական գործեր չեն հանդիպում, ապա օրինակ այնպիսի փոքր երկրներում, ինչպիսին օրինակ Մավրիկիին է, դատական իշխանությունն ավելի խոցելի է և դատարանի սկանդալիզացիայի համար պատասխա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նատվության ենթարկելն անհրաժեշտություն է[7]: Նմանատիպ դիրքորոշում է արտահայտվում նաև Սինգապուրի առնչությամբ[8]: Զիմբվաբվեի Գերագույն դատարանն 2000 թվականին կայացրած որոշմամբ արդարացրեց «դատարանի սկանդալիզացիայի» հանցակազմի գոյությունը, հիմնավորելով, որ դատարանները չունեն որևէ այլ հարթակ, որտեղ կարող են պատասխանել քննադատությանը: Նրանք չեն կարող քննարկել նման հարցերը հրապարակայնորեն՝ առանց հարվածի տակ դնելու իրենց անկողմնակալությունը: Ահա թե ինչու է նմանատիպ պաշտպանության միջոց տրամադրվում դատավորներին և չի տրամադրվում այլ պաշտոնյաներին և քաղաքական գործիչներին[9]:

Ի հակադրություն այս երկրների Կանադայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում խնդրո առարկա ինստիտուտի հետ կապված հայցերը շատ հազվադեպ են հաջողության հասնում, քանի որ դատարանները սահմանափակում են այն խոսքի ազատության սրբազան իրավունքով:

Եթե ուսումնասիրում ենք Բրիտանական համագործակցության անդամ տարբեր երկրների վերաբերմունքն այս հիմնախնդրի առնչությամբ, ակնհայտ է դառնում, որ այնտեղ ուր հասարակության անդամներն ունեն համեմատաբար բարձր իրավական և քաղաքական մշակույթ, բարձր է ժողովրդավարության մակարդակը, երաշխավորված է խոսքի ազատությունը և պետական մարմինների նկատմամբ առկա է հանրային վերահսկողության բարձր աստիճանը հետզհետե մոռացության են տալիս այս ինստիտուտը:

*Իհարկե մեր խորին համոզմամբ խնդիրը միայն այն չէ, որ այդ երկրներում դատարանները և ժողովրդավարական հասարակությունը նախապատվություն են տալիս խոսքի ազատությանը և պետական մարմինների նկատմամբ հանրային վերահսկողության անհրաժեշտությունը՝ ի հաշիվ դատական իշխանության հեղինակության նվազեցման: Կարծում ենք, պատճառը, ի թիվս այլոց, այն է, որ հասարակության անդամները տարիների ընթացքում սովորել են հարգել դատական իշխանությունը և անհարկի չհարել որջամիտ քննադատության սահմանները, իսկ դատարանները՝ իրենց գործունեությամբ վաստակել են այդ հարգանքը:*

Այնուամենայնիվ, ինչպես վերը նշել էինք, ներկայումս հատկապես համացանցի ստեղծումից ի վեր, և հատկապես՝ զարգացող երկրների, այդ թվում նաև՝ ռոմանոգերմանական իրավական ընտանիքի, դոկտ-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րինալ շրջանակներում ժամանակ առ ժամանակ քննարկման առարկա է դառնում և շրջանառության մեջ է դրվում «դատարանի սկանդալիզացիա» եզրույթը, բնորոշելու համար այն վարքագիծը, որն ուղղակի կամ անուղղակի նպատակ ունի նսեմացնել դատական իշխանության հեղինակությունը: Ֆրանսիական մասնագիտական շրջանակներում այս երևույթն անվանում են «դատարանի քննադատում» («criticism of judges»), բայց դրա հետ կապված վեճերը քննում են քաղաքացիական դատավարության կարգով:

Որպես հետաքրքիր օրինակ բերենք ռուսական մասնագիտական շրջանակներում քննարկվող այն թեզը, որ անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել հիմնախնդիրը և պատասխանատվություն սահմանել այն անձանց նկատմամբ, որոնք օգտագործելով ժամանակակից աշխարհում ստեղծված հնարավորությունները, լրատվամիջոցներում պատվիրված և հրապարակված նյութերի տարածմամբ փորձ են անում վարկաբեկել կամ ճնշում գործադրել դատարանի նկատմամբ: Այսպես, 2019 թվականին ՌԴ դատավորների խորհրդի նախագահ Վ.Մոմոտովն իր «Դատարանի նկատմամբ հարգանքը, որպես իրավական կատեգորիա» զեկույցով շրջանառության մեջ դրեց և հետագայում զարգացրեց այն գաղափարը, որ «դատարանի սկանդալիզացիան» պետք է ամրագրվի ՌԴ օրենսդրությամբ որպես առանձին իրավախախտում՝ բերելով դրա հիմնավորումները[10]:

Նույն 2019 թվականին ՌԴ դատավորների ժողովն ընդունեց դատական համակարգի տեղեկատվական քաղաքականության հայեցակարգը, որում ամրագրվեց, «դատարանի սկանդալիզացիան» որպես «...դատական իշխանության վերաբերյալ հասարակական կարծիքի մանիպուլյացիա, դրա հեղինակության նվաստացում, անկանոն և անհիմն քննադատություն, որը սասանում է հասարակության վստահությունը արդարադատության իրականացման գործընթացի նկատմամբ», և խիստ անհրաժեշտ համարվեց ՋԼՄ-երում այդ երևույթի դրսևորման համար պատասխանատվության նախատեսումը[11]:

Ինչպես և ակնկալվում էր, ի պատասխան դրա, լրատվամիջոցները քննարկման առարկա դարձրեցին, այն հարցը, թե ո՞վ է ավելի շատ սկանդալիզացնում դատարանը, լրատվամիջոցները, թե՛ հենց դատավորները՝ հանրության մեջ իրենց ոչ պատշաճ, երբեմն հանրային ընկալմամբ անբարո վարքագծի դրսևորմամբ, կոռուպցիոն սկանդալներ

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րում ներգրավվածությամբ և այլն, բերելով իրենց փաստարկները հիմնավորող փաստեր: Արդյունքում, մեր գնահատմամբ, դատավորների համայնքը, ինչպես հայտնի ռուսական ասույթում է նշվում՝ ցանկացան անել լավը, ստացվեց՝ ինչպես միշտ, բացեցին պանդորայի արկղը և համացանցը հեղեղվեց դատական իշխանությունը սկանդալացնող դատավորների մասին փաստական տվյալներով:

Ինչ վերաբերում է հայկական իրականությանը, ապա որպես այդպիսին «դատարանի սկանդալիզացիա» եզրույթն անծանոթ է մեր իրականությանը, ինչը չենք կարող ասել եզրույթի տակ ենթադրվող երևույթներին: Ինչպես և ամբողջ աշխարհում, մեզանում էլ համացանցի կիրառելիության լայն տարածմամբ առավել հաճախակի սկսեցին հանդիպել դատական իշխանությանը քննադատող, ինչպես նաև ողջամիտ քննադատության սահմանները հասող՝ վարկաբեկող տեղեկատվական նյութեր: Վերջիններս որևէ կերպ չեն կարող նպաստել, իսկ ավելի հաճախ՝ խոչընդոտում են դատական իշխանության բարձր հեղինակության պահպանմանը:

Ընդ որում, ինչպես և բնորոշ է բազմաթիվ ժամանակակից երիտասարդ ժողովրդավարության երկրներին, Հայաստանում նույնպես որպես դատարանները սկանդալիզացիայի ենթարկող սուբյեկտներ հանդես են գալիս ինչպես հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչները, այնպես էլ հենց իրենք՝ դատավորները:

Ինչ վերաբերում է հասարակության լայն շերտերի ներկայացուցիչների կողմից դատարանը սկանդալիզացիայի ենթարկելու տարաբնույթ փորձերին, ապա նշենք, որ նմաներևույթ արձանագրել և դրան մի քանի առիթներով անրադարձել է նաև ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը, արձանագրելով, որ «սոցիալական ցանցերում և որոշ մամուլի միջոցներում տեղ են գտնում դատավորների վերաբերյալ հնչեցվող վիրավորական արտահայտություններ, որոնք որոշ դեպքերում վեր են ածվում հայիոյանքների...»: Կարևորելով սուր քննադատության և ազատ կարծիք արտահայտելու հնարավորությունը ժողովրդավարական հասարակությունում, ԲԴԽ-ն կոչ արեց բոլորին գերծ մնալ դատավորների հասցեին հնչեցվող վիրավորական արտահայտություններից և նման արտահայտությունները տարածելուց և վստահեցրեց, որ շարունակելու է ձեռնարկել անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու համար դատական համակարգի վերափոխումը և առողջացումը, ինչը կնպաստի

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության և հարգանքի ձևավորմանը և դրա ներկայացուցիչների վերաբերյալ վիրավորական արտահայտություններով կարծիք հայտնելու մերժմանը[12]:

Դատավորների ուղղակի, օրենսդրորեն ամրագրված պարտավորությունն է գործել օրենքի շրջանակներում, թույլ չտալ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի կամ դատավորի վարքագծի կանոնների խախտումներ, բարձր պահել իրենց, դատարանի և դատական իշխանության հեղինակությունը: Մինչդեռ Հայաստանի երրորդ հանրապետության պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ դատավորներն իրենք են իրենց դրսևորած վարքագծով սկանդալիզացրել դատական իշխանությունը, և այդ դեպքերն, այդ թվում նաև շնորհիվ խոսքի և մամուլիազատության իրավունքի իրացման, հայտնի են դարձել լայն հասարակությանը՝ հիմք հանդիսանալով նաև կարգապահական վարույթների հարուցման համար:

Վերջին օրենսդրական փոփոխություններով ՀՀ օրենսդրության մեջ ներդրվեց մի գործիքակազմ՝ դատավորների բարեվարքության ստուգման ընթացակարգ, որը մեր համոզմամբ ևս գործուն միջոց է զերծ պահելու դատական իշխանությունը առնվազն՝ դատավորների կողմից սկանդալիզացիայի ենթարկելուց:

Ամփոփելով «դատարանի սկանդալիզացիայի» որպես ինստիտուտի պատմահամեմատական վերլուծությունը, նշենք, որ ամենևին չենք կիսում ռուսական իրավական դոկտրինալ շրջանակներում շրջանառության մեջ դրված այն տեսակետը, որ հասարակության ներկայացուցիչների (և մասնավորապես՝ ՋԼՄ-երի) կողմից դատարանի սկանդալիզացիային ուղղված գործողությունները պետք է միանշանակ որակվեն որպես քրեորեն պատժելի արարքներ: Ամենևին չժխտելով ժամանակակից իրականության մեջ այդ երևույթի լայն տարածումը գտնում ենք, որ դրա վերացումը պետք է մի կողմից՝ *պայմանավորվի հասարակության անդամների մոտ բարձր իրավական մշակույթի, ժողովրդավարական արժեքների, պետական ինստիտուտների նկատմամբ վստահության և հարգանքի բարձր աստիճանի սերմանմամբ: Մյուս կողմից՝ դրան պետք է նպաստեն դատական իշխանության ներկայացուցիչները, իրենց բարձր բարոյական որակներով, մասնագիտական զսպվածությամբ, արհեստավարժությամբ, հանրային վերահսկողության հա-*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*մար բաց լինելով, հաշվետվողականությամբ, և բարեվարքություն ենթադրող այլ հատկանիշների դրսևորմամբ:*

Ի վերջո, պատահական չէ, որ անգլիական իրավունքում խնդրո առարկա ինստիտուտը գրեթե դուրս եկավ գործածությունից այն ժամանակ, երբ դատարաններն իրենց աշխատելաճով արժանացան հանրային բարձր վստահության, ճանաչեցին խոսքի ազատության իրավունքի կարևորությունը ժողովրդավարական հասարակություններում, իսկ հասարակության ներկայացուցիչները, մասնավորապես՝ ՋԼՄ-երն ընդունեցին ողջամիտ քննադատության և դատարաններն անհարկի սկանդալիզացիայի չենթարկելու միջև առկա անտեսանելի հոծ գիծը չխախտելու կանոնը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. ՍԿԱՆԴԱԼ- 1.Լայնորեն հայտնի դարձած ու մասնակիցներին խայտառակող իրողություն, 2.Անպատվաբեր՝ դատապարտելի արարք՝ գործողություն Տե՛ս Է.Ադայան «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատ., Երեւան, 1976, էջ 1309
2. Chokolingo v. AF of Trinidad and Tobago [1981] 1 All ER 244, p. 248. Հղումն ըստ Background Paper on Freedom of Expression and Contempt of Court for the International Seminar on Promoting Freedom of Expression With the Three Specialised International Mandates Hilton Hotel London, United Kingdom 29-30 November 2000
3. Ըստ աղբյուրների եզրույթն առաջինը կիրառել է Լորդ Կանցլեր Հարոլդիքը Roach v. Garven (1742) գործում:
4. Douglas Hay. Contempt by Scandalizing the Court: A Political History on the First Hundred Years/ Osgoode Hall Law Journal, V 25,n.3 /1987/
5. Այս մասին մանրամասն տե՛ս՝ A.Denning. The Due Process of Law, Oxford publishing, 1980
6. The Law Commission (LAW COM No 335) CONTEMPT OF COURT: SCANDALISING THE COURT Presented to Parliament pursuant to section 3(2) of the Law Commissions Act 1965, Ordered by the House of Commons to be printed on 18 December 2012 [https://s3-eu-west-2.amazonaws.com/lawcom-prod-storage-11jxsou24uy7q/uploads/2015/06/lc335\\_scandalising\\_the\\_court.pdf](https://s3-eu-west-2.amazonaws.com/lawcom-prod-storage-11jxsou24uy7q/uploads/2015/06/lc335_scandalising_the_court.pdf)

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

7. Մավրիկիի Գերագույն դատարանի որոշումը Ahnee & Ors v. Director of Public Prosecutions գործով: Հղումն ըստ Background Paper on Freedom of Expression and Contempt of Court for the International Seminar on Promoting Freedom of Expression With the Three Specialised International Mandates Hilton Hotel London, United Kingdom 29-30 November 2000
8. Kevin Y.L. Tan Defaming politicians scandalizing the courts / Democracy, Media and Law in Malaysia and Singapore: A Space for Speech, 2014, London and New Yourk
9. Մանրամասն՝ տես նույն տեղում:
10. <https://askchr.arbitr.ru/node/13690>
11. <http://www.consultant.ru>
12. [www.court.am](http://www.court.am)

### «СКАНДАЛИЗАЦИЯ СУДА» СРАВНИТЕЛЬНО-ИСТОРИЧЕСКИЙ АНАЛИЗ ЯВЛЕНИЯ

**Алина Пхриян**

ЕУ, кафедра Правоведения,  
к.ю.н., доцент

В рамках данной статьи сравнительно-правовым методом изучаются проблемы доверия широких кругов общества к суду и судебной власти, а именно, один из факторов подрывающий это доверие, которое известно в истории уголовного права Англии как «скандализация суда». В статье рассматриваются также виды современного проявления данного явления и доктринальное отношение к нему.

**Ключевые слова:** скандализация суда, судебная власть, свобода слова, общественное доверие